ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. N ----- -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 34-35-րդ, 42-րդ և 67-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 18,900,000 (տասնութ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 18,893,347 (տասնութ միլիոն ութ հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր քառասունյոթ) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 2,257 (երկու հազար երկու հարյուր հիսունյոթ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 8,371 (ութ հազար երեք հարյուր յոթանասունմեկ) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 41,997,307 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար երեք հարյուր յոթ) ՀՀ դրամ, որը կազմում է 5,017 (հինգ հազար տասնյոթ) հատ 8,371 (ութ հազար երեք հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված

Կազմված է ----------2026թ.
և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Երևան քաղաքի ավագանու
« » 2026թ.
N -Ա որոշմամբ

ՀՀ Երևանի քաղաքապետ՝

_____ Տ. ԱՎԻՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 28.02.1996թ.,
գրանցման N 278.140.01475

վկայական N 01 Ա 022800

ՀՎՀՀ 00404386

24.05.2010թ. գրանցված կանոնադրության
թիվ ____.___ փոփոխությունը գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

_____

“____”_____ 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

2026թ.

Ընկերության կանոնադրության 4.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 41,997,307 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար երեք հարյուր յոթ) դրամ, որը կազմում է 5,017 (հինգ հազար տասնյոթ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 8,371 (ութ հազար երեք հարյուր յոթանասունմեկ) դրամ:

Բոլոր 8,371 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ 24.05.2010թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, այն է՝ Երևանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատում է Երևանի ավագանին:

Երևանի քաղաքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.268-Ն և Երևանի քաղաքապետի՝ 2025 թվականի հունվարի 14-ի հ.103-Ա որոշումներով, ռենտգեն ախտորոշման համակարգ ձեռք բերելու նպատակով՝ հաստատվել է Երևան քաղաքի 2025թ. բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվելիք գումարի չափը՝ 18,900,000 ՀՀ դրամ, ինչն էլ ամբողջությամբ՝ որպես կանոնադրական կապիտալի ներդրում, հատկացվել է ընկերությանը:

Նշված գումարի սահմաններում տեղաբաշխվել է լրացուցիչ 2,257 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 8,371 ՀՀ դրամ անվանական արժեքով, ինչի արդյունքում կանոնադրական կապիտալն ավելանում է 18,893,347 ՀՀ դրամով:

Հատկացված գումարի չափով կանոնադրական կապիտալի ավելացումը բխում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 42-րդ հոդվածի պահանջներից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ